ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՍԵՎԱՆԻ Վ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

05.01.2024թ.

ՈՐՈՇՈՒՄ

«ԳՐԻԳՈՐՅԱՆ Ս» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պարզեցի

«Սևանի Վ.Կարապետյանի անվան N3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար հայտարարված N ԳՄՍՀԴ3-ԳՀԱՊՁԲ-2024/01 ծածկագրով ընթացակարգի բացման նիստում բանավոր բողոքի քննության արդյունքում արձանագրվել է, որ Գրիգորյան Ս ՍՊԸ-ի իրական շահառու հանդիսացող Խաչիկ Գրիգորյանը հանդիսում է նաև ՀՀ գնումների գործընթացում մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառված ԱՐՏԱԿՇԻՆ ՍՊԸ-ի իրական շահառու:

Այսպիսով, հիմք ընդունելով 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն ՀՀ Կառավարության որոշման 33-րդ կետի 8-րդ ենթակետը, ինչպես նաև 119 կետը՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: Սույն կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում հսկողություն և (կամ) վերահսկողություն իրականացնող մարմինները, իսկ մյուս դեպքերում պատվիրատուն այդ մասին ծանուցում են իրավապահ մարմիններին՝ վերջիններիս և պայմանագիր կնքած մասնակցին ներկայացնելով հիմքերը:

Գնահատող հանձնաժողովի 05.01.2024թ. թիվ3 արձանագրությամբ որոշվել է մերժել Գրիգորյան Ս ՍՊԸ-ի հայտը՝ միջոցներ ձեռնարկելով մասնակցին ներառելու գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ղեկավարվելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով և հիմք ընդունելով վերոգրյալը՝

Որոշեցի

«Գրիգորյան Ս» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն՝ «Գրիգորյան Ս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազորված մարմին՝ Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրելով նաև մասնակցին:

ՏՆՕՐԵՆ՝ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ